

Կ Բ Ո Ն Ա Կ Ա Ն — Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

ՊԵՏՐՈՍԻ ՈՒՐԱՅՈՒԹԻՒՆԸ

Ղ.ս.կ. ԻԹ. 54—62.

Պետրոսը Յիսուսի վերաբերութեամբ մի այնպիսի անհաւատարմութիւն էր ցոյց տուել, որ Տիրոջը պէտքէ խորապէս վիրաւորէր, ոչ թէ նրա համար, որ այդ քահանայապետների դատավճռի վերայ որ և է ազդեցութիւն անել կարող էր: Ոչ, այդ վճռուած էր նախ քան Քրիստոսին բռնելը: Բայց այն խումբը, որ աշակերտի ուրացութեանը ներկայ էր, և ամէն ոք, որ այդ մասին լսում էր, պէտք է կզրակացնէր, թէ այդ ուրացութիւնը հեռեանք էր ոչ թէ Պետրոսի բնաւորութեան թուլութեան այլ այն շնչին և անհաստատ տպաւորութեան, որ վարպետի անձնաւորութիւնը թողել էր նրա վերայ: Եթէ այսպէս իսկոյն շատ քիչ ճնշիչ հանգամանքների տակ աշակերտներն իրենց ուսուցչին պէտքէ թողնէին, այն ժամանակ իսկապէս կարելի էր նախազուշակել, որ նրա մահից յետոյ իւր հետքն էլ պէտք է անհետանար:

Եւ այսպիսի մեղք գործում է այն Պետրոսը, որ իւր ընկերների առաջ խոստովանել էր թէ Յիսուս է Աստուծոյ Որդին. այն Պետրոսը, որին երբ Տէրը միւս աշակերտների հետ զգուշացնում է, պատասխանում է. «Թեպէտ և ամենեքին դայթակղեսցին, այլ ես ոչ... Եթէ մեռանել ևս հասանիցէ ընդ քեզ՝ զքեզ ոչ ուրացայցու» (Մարկ. Ժ. 29, 31). այն Պետրոսը, որ հենց նոր ցոյց տուեց թէ իւր խօսքերը գործ դարձնել կարող է, երբ նա Քրիստոսին այսպանողների մէջ մանելով սրով Մաղքոսի ականջը վիրաւորեց. այն Պետրոսը, որ միւս աշակերտների նման ձերբակալուած Տիրոջը չթողեց, այլ մինչև քահանայապետների պալատը հեռեց նրան: Արդեօք կրակի

մօտ տաքացող զինուորների մօտ նրա մնալը ապացոյց չէ՞ այն բանի, որ նա իբրք Տիրոջը հաւատարիմ էր մնացել: — Եւ այժմ ո՞վ է նրան ուրանալու ստիպում, արդեօք ինքը քահանայապետը թէ զինուորականների խումբը: Սրանց յաղթել կարող էր նա. մի աղախին է այն:

Աղախնի անսպասելի կերպով ասած խօսքերի համար, նա նախապատրաստուած չէր. նա աղախնից խոյս է տալիս, գուցէ, առանց հաշիւ տալու իբրան, թէ դրանով ինչ էր անում: Եւ ահա նա թակարդի մէջ է: Գայթակգեցուցիչ հարցից յետոյ նրա մէջ փոխանակ մի երկրորդ անձնաւորութիւն գիտակցութեան գալու և իրեն իբրև ստախօս մեղադրելու, որն այդպիսի հանդամանքներում ներկի և կամ աւելի լաւ է ասել հասկանալի է, նա պնդում է իւր ուրացումը: Այո՛, եթէ մենք միւս աւետարանիչների բացատրութիւններն ևս առաջ բերենք, մեր առաջ խսկոյն բարձրանում նրա է մեղքը. նախ՝ մերժողականք, «չգիտեմ զի՛նչ խօսիսդ». ապա խսկական ուրացումը՝ «Ո՛չ գիտեմ զնա», և վերջապէս. «Եւ նա սկսաւ նզովել, երզնուլ և ասել, թէ ո՛չ գիտեմ զայրն»: — —

Ո՞վ Պետրոս, Պետրոս, արդեօք այդ դձև ևս: Կարելի՞ բան է այդպիսի խոր անկումը: Երանի՛ թէ, երբ մենք ուրացութեան մէջ ենք, միշտ այդ զգաստացուցիչ ձայնը մեր մէջ հնչէ: Ի՞նչպէս յաճախ շենք նկատում, որ մենք էլ նոյնպիսի մեղքի մէջ ենք ընկնում: Սակայն այժմ հայեացքը լքջօրէն մեզ վերայ ուղղենք: Մեր աւետարանը կամենում է այնպիսիների անհաւատարմութիւնը բաց անել, որոնք անբաժանելի կերպով Քրիստոսին պատկանել են կամենում և դրա համար որպէս թէ ապացոյցներ են սուել խօսքով և գործով: Վայը դէք քարը, որը դուք գուցէ կամենում էք ձգել նրանց վերայ, որոնք դուրսն են կանգնած: Մենք որոշ յոյս ենք գնում քրիստոնէութեան վերայ: Մենք երկմտելով չենք հարցնում. «Գեո ևս քրիստոնեայ ենք», այլ քաջալերելով կոչում ենք մեզ Աստուծոյ ասն մէջ, ինչպէս դուրսը մեր պարտականութեանց կատարման ժամանակ, «եկէք հոգով և մարմնով մեր սիրելի Տիրոջը հետեւնք»:

Եւ եթէ պէտք լինի հրապարակային ծանուցմամբ այսպիսի մտածողութիւնը պաշտպանել, մենք պատրաստ ենք: Պարզօրէն արտասանած խոստովանութեան համար ոգևորուիլը մի գեղեցիկ բան է: Ո՞ւմ սիրոյ արժանի չէ թւում Պետրոսը Փիլիպպիայի կեսարիայում կամ խորհրդաւոր ընթրիքի երեկոյեան: Եւ ես չեմ ասում, ճանաչուած մտածողութիւնը, այլ մի մութ զգացմունք օգնում է մեզ, եթէ հարկաւոր է, նմանօրինակ խոստովանութիւն ցոյց տալ, այո՛, Պետրոսի նման սուրբ քաջել և «սուր» խօսքով ծաղրողին յետ մղելու կամ քաջագործութեամբ այն հոսանքի առաջն առնելու, որի նպատակն էր քրիստոնէութիւնը ոչնչացնել կամ ամօթահար անել: Սակայն խոստովանութեան հաւատարմութիւնը նոյնը չէ ինչ որ Քրիստոսին հաւատարիմ լինելն է, և մարտիրոսների հերոսութիւնը մի ծածուկ խոստովանութեան պարզ հաստատութեանը փոխարինել չի կարող: Ինչպէս այն ժամանակ այսօր էլ կան—ոչ միայն Պետրոսի նման անհաստատ բնաւորութիւններ,— բաւականաչափ այնպիսի անձինք, որոնք Տիրոջը, ես կասեմ, ոչ թէ երեք անգամ, ոչ, անթիւ անհամար կերպով ուրանում են:

Եթէ ժամանակը ներէր, ես ձեզ ցոյց կտայի, թէ ինչպէս այսօր էլ աղախինը ի կատար է ածում այն, ինչ որ հզօր տէրութեանը չի յաջողուել: Հազարի համար մի օրինակն էլ բաւական է: Հայեացքս ընկնում է մեր հասարակական կեանքի վերայ, որի մէջ մենք արտաքին ձեւերով ենք ապրում: Ի՞նչպէս յաճախ խօսակցութեան ժամանակ ծաղրի ենք ենթարկում այն՝ որը, փառք Աստուծոյ, դեռ եւ մեզանից շատերի համար սրբութիւն է: Եւ ո՞վ քաջութիւն և բաւական վճռականութիւն ունի, կարճ խօսքերով կամ առանց թիւրիմացութեան այն անվայելչութեան վերայ մասնանշել, որը պարսաւելի է, եթէ նոյն իսկ այդ մի խելօք և գեղեցիկ կնոջ բերանից է դուրս եկել: Մեզ այդ բանից մի յիմար ոյժ յետ է պահում: Հասարակական կարգերի խանգարումն կլինի, եթէ մարդ իբրև բարոյախօս քարոզիչ հանդէս դայ: Եւ մենք մար-

զիկա շատ դէպքերում այն կարծիքին ենք, որ մի կնոջ նոյն իսկ կոպիտ խօսքով կարելի է մի բա՞ն հասկացնել: Յամենայն դէպս հասարակական կարգերի խանդարումն պէտք է նրանց մօտ փնտրել, որոնք ոչ մի յարգանք չեն տածում այն բանին, ինչ որ ուրիշների համար սուրբ է: — Ձեզ՝ կանանց ենք օգնութեան կանչում այս տեսակ և դրանց նման հանգամանքում: Որովհետև ձեր ծաղրական հարցերի զիմաց մարդ հեշտութեամբ զինաթափ է լինում, ուստի դուք որ կարգապահութեան և սովորութեան պահապանն էք, կարող էք աւելի հեշտ քան մարդիկս ձեր ծաղրական խօսքի մի հայեացքով ազդեցութիւն գործել, այն, մինչև իսկ հէնց սկզբից արգելել, որ, որ և է մէկը վիրաւորուած սրտով ձեր շրջանից չհեռանայ:

Տիրոջը անհաւատարիմ լինելը սակայն ուրացութեան այսպիսի դէպքերով չի սահմանափակում, այլ երևան է գալիս ամէն տեղ, որտեղ մարդ նրա օրէնքներին անհաւատարիմ է: Այստեղ մենք ինքնամոռացութեան մէջ ենք ընկնում և մեր ամենաթոյլ ժամերից մէկն է: Ով որ այդ բոպէին իրեն վերայ մի հայեացք ձգի, կհասկանայ, որ ինքն էլ Քրիստոսի փրկարար և ներող սիրոյ ոյժի կարիքն ունի: Մեր բնաւորութիւնը անհամաձայնութիւն է ներկայացնում, ո՞վ չէ տեսնում այդ Պետրոսի մէջ: Ով ճշմարիտ խոստովանող լինել է կամենում, ինքն իրեն պէտք է փրկուի Քրիստոսի սիրոյ միջոցով:

Պետրոսը գուրս է գնում և գառնապէս լալիս, զրդման, այն ճշմարիտ զղջման արտասունքներն է թափում, որի մէջ պարունակում է մեղքի ճանաչողութիւնը և թէպէտ հազիւ նուկայծող յոյս՝ թողութեան համար: Ի՞նչպէս նա այդ բանին հասաւ: Աքաղաղը, օրուայ պատգամաբերը, կանչեց: Այդ նրան ցնցեց, ինչպէս որ մէկը առաւօտեան զով քամուց ցնցւում է, և իւր քնից արթնանում: Նա մտաբերում է աքաղաղի մասին ասած խօսքը, և դրանից նրա ներքին մարդու առաջ հանդէս է գալիս Քրիստոսի պատկերը: Արդեօք կարողացաւ նա աւետարանիչների տուած տեղեկութեանց համեմատ այն աչ-

քերին նայելու, որ Տէրն ուղղել էր նրա վերայ, նրա ներսը Յիսուսի պատկերը անընդհատ կենդանանում էր: Աւելի պայծառ քան մոխրի մէջ հանդիպող կրակը, որի մօտ Պետրոսը այն շարագուշակ խօսքերն ասաց, փայլում է նրա առաջ առաւօտեան դէմ յաւիտենականութիւնը, անվերջ փառքը այն մարդու, որի կեանքի ժամանակամիջոցը ուրախ հերօսութեամբ է ճանաչել, որովհետեւ նրա հոգւոյ կերակուրը իւր Հօր միակ կամքը կատարելն էր: Օ՛, որքան խաւար է գրա մօտ անհաւատարիմի և ուրացողի պատկերը: Սակայն աւելի պայծառ ճառագայթներ, քան այն փառքը, արտացոլում է անվերջ կերպով այն սէրը, որով Տէրը իւրայիններին սիրեց, որոնք այս աշխարհումն են: Յուսոյ այն ուրախութիւնը, որ նրան խոստովանել տուեց՝ «Ո՛չ մէկին չեմ կորցրել նրանցից, որոնք ինձ էին հաւատացած», աշակերտին չէ թողնում յուսահատուել: Նա ծագող առաւօտեան՝ դէմ դուրս է շապում: Նրա համար օրը խաւար է ծագում, և սակայն դրանից յետոյ լոյս պէտք է լինէր:

Օ՛, Փրկչի անհուն սէր, դու որ մեզաւորներին վերկեցիր նախ քան խաչի վերայ քո սուրբ արիւնդ թափելը: Թէպէտ Փրկիչը իւր խաչելութեամբը մարդկանցից բաժանւում է, սակայն նրա պատկերը մեր հոգւոյ աչքերի առաջ նոյնպէս կենդանի կարող է առաջ գալ ինչպէս Պետրոսի առաջ, Մանկութեան հասակից սկսած, նա իրրեւ մեղքի ճանաչողութեան և մեղքի թողութեան ոյժ պէտք է մեր կեանքի մէջ պատուաստուի, որպէսզի մեզ ոչ թէ լսկ խօսքը և համայնքի հոգևոր երգերը, զանդալնների զօղանջիւնը և խաչեցեալի պատկերը, ոչ, այլ ամէն բան մեզ պատմէ նրանից, որը մեզ սիրում է. — գաշտի ծագիկները, որոնցից ոչ մէկը Յեսիայի արմատից բղխած վարդին, երկնքի աստղերը, որոնցից ոչ մէկը Յակովբի ցեղից ծագած առաւօտեան աստղին չեն գերազանցում: Որ գիշերային լուսիւնը և երկնքի արեգակը մեզ ցոյց աայ նրան, որը մեր հոգւոյ հանգստութիւնն ու լոյսը լինել է կամենում: Ինչք, ծնողներ, պատուաստեցէք նրա պատկերը ձեր որդւոց սրտերի մէջ, որպէսզի այդ պատկերը փրկութեան զօրութեամբ նրանց ամբողջ կեանքի մէջ թափանցէ. ամէն:

Գերմ. Թարգ. Ա. Վ.

